



Ծ Ի Ա Շ Ա Ն


ԱՄՍԱԳԻՐ

ԹԵՄԱԿԱՆ, ԲՈՐՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՑ.

ՅՈՒՆԻՍ

1865 ԱՄԻ.

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ



այսի 8. — Դերապատիւ Տեղական Առաջնորդութեան վիճակիս, հետը առնելով Առաջնորդական Ատենիս անդամ՝ Շահինեան Տէր Դաւիթ Քահանայն՝ ուղեւորեցաւծովովի նախիջեւան,

եւ ի ճանապարհին այցելութիւն ըրաւ կերչի Աղօթանոցին։ Ամսոյս 10-ին հասաւ ի նախիջեւան, եւ սովորական հանդիսիւ Մայր Եկեղեցին մտնելն ետքը՝ գնաց իրեն համար պատրաստուած բնակարանը, ուր գարձեալ ներկայացան իրեն քաղաքին իշխանաւորներուն մեծ մասը, եւ յետոյ Եկեղեցականները։

Մայսի 15. — Թիֆլիզու ներսիսեան Հոգեւոր Դպրոցին հին աշակերտներէն նոքա՝ որ վայելած էին հանգուցեալ Ալամդարեան Յարութիւն վարդապետին վարժապետական ինամքը, գեղեցիկ երախտագիտութեամբ վառապետական կանգնել տուին իրենց փառաւոր շիրիմ կանգնել տուին իրենց

ծախիւքը այն բազմարդիւն անձին վրայ՝ որ իւղուած է նախիջեւանի Սուրբ Խաչ վանքին Եկեղեցւոյն հարաւակողմը։ Շիրիմը ձոյլ երկաթէ Խաչ է՝ գեղեցիկազարդ ու վայելուչ ձեւով՝ բարձրկեկ պատուանդանի վրայ կանգնած, եւ չորս գին նոյնպէս երկաթէ վանդակապատ քաշուած։

Մայսի 18. — Անգրէաս Սրբազան Արքեպիսկոպոսը, որ նշանակուած էր վերազնիչ Հոգեւոր գործոց վիճակիս նախիջեւանի եւ Պեսարապիոյ, ճանապարհ ելաւ նախիջեւանէն, եւ գարձաւ Սթաւրոփոլի վրայէն ի Ս. Էջմիածին։

Մայսի 24. — Գ. Առաջնորդը նախիջեւանի Եկեղեցական գործերուն վրայ պէտք եղած գիտութիւնները և օրուան մէջ ընելն ետքը, ճանապարհ ելաւ անկից շողենաւով գէպ ի Թայլան, եւ 26-ին հասաւ ի Թէոդոսիա։